



ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒԻ ՀՐԱՄԱՆԸ COVID-19-Ի ՎԵՐԱՀՄԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Հանրային Առողջապահության Հրամանը Շտապ Մեկուսացման Վերաբերյալ Վերանայված Հրամանը թողարկվել է 2020թ.-ի Դեկտեմբերի 17-ին Այս Հրամանը փոխարինում է Հանրային Առողջապահության Շտապ Մեկուսացման Վերաբերյալ 2020թ.-ի Հոկտեմբերի 26-ի Հրամանին:
Այս Հրամանն ուժի մեջ է՝ մինչև Առողջապահության Պատասխանատուի կողմից չեղյալ հայտարարելը:

ԻՆՉՈՒ ԵՔ ԴՈՒՔ ՍՍԱԳԵԼ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒԻ ԱՅՍ ՀՐԱՄԱՆԸ

Բոլոր անձանցից, ովքեր բնակվում են Լոս Անջելես Շրջանի Առողջապահության Իրավասության մեջ, ում մոտ ախտորոշվել է COVID-19, պահանջվում է ինքնամեկուսանալ և հետևել սույն Հրամանի բոլոր ցուցումներին: Համարվում է, որ անձի մոտ ախտորոշվել է COVID-19՝ հիմնվելով հետևյալ չափանիշներից մեկի կամ երկուսի վրա.

- a) Դուք ստացել եք COVID-19-ի ախտորոշիչ (վիրուսային) թեստի դրական պատասխան և/կամ
- b) Առողջապահության մատակարարը կլինիկորեն կասկածում է, որ դուք COVID-19-ով եք հիվանդ

ԻՆՉ Է ՁԵԶՆԻՑ ՊԱՀԱՆՉՎՈՒՄ ԱՆԵԼ ԵԹԵ COVID-19 ՈՒՆԵՔ

COVID-19-ի տարածումը կանխելու համար Լոս Անջելես Շրջանի Առողջապահության Պատասխանատուն (<<Առողջապահության Պատասխանատու>>) սույնով ձեզնից պահանջում է անհապաղ՝

- a) Ինքնամեկուսանալ և
- b) Ձեզ հետ սերտ շփում ունեցող անձանց հայտնել, որ ինքնակարանտին պահպանեն, եթե դուք ստացել եք COVID-19-ի ախտորոշիչ (վիրուսային) թեստի դրական պատասխան, և
- c) Հետևել սույն Հրամանի բոլոր ցուցումներին:

ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

1. Ինքնամեկուսացեք, մինչև այլևս COVID-19 տարածելու վտանգ չեք ներկայացնում

Դուք պետք է ինքնամեկուսանաք (մնաք ձեր տանը կամ այլ բնակավայրում և մյուսներից հեռու), մինչև այլևս COVID-19 տարածելու վտանգ չեք ներկայացնում (տե՛ս ստորև «Ինքնամեկուսացման Տևողությունը»): Մինչ այդ պահը, դուք չեք կարող հեռանալ ձեր մեկուսացման վայրից, կամ մուտք գործել որևէ հանրային կամ մասնավոր վայր, բացառությամբ՝ անհրաժեշտ բժշկական օգնություն ստանալու նպատակով:

Սակայն, եթե դուք առողջապահության կամ առաջին արձագանքման ոլորտի աշխատող եք և ախտանիշներ չունեք (ասիմպտոմատիկ վարակ), ձեզ կարող է թույլատրվել վերադառնալ աշխատանքի, եթե ձեր գործատուն աշխատակազմի ծայրահեղ պակասորդ ունի, և դուք պետք է հետևեք ձեր գործատուի կողմից հաստատված աշխատանքի վերադառնալու արձանագրություններին: Երբ էական աշխատանք չեք կատարում, դուք պետք է ենթարկվեք մեկուսացման սույն հրամանին:



Ձեզնից պահանջվում է ինքնամեկուսանալ, քանի որ դուք կարող եք հեշտորեն փոխանցել COVID-19 մյուսներին, ներառյալ՝ այն մարդկանց, ովքեր ծանր հիվանդանալու վտանգի տակ են, ինչպիսիք են՝ ավելի տարեցները և [առողջական խնդիրներ](#) ունեցողները:

Եթե ձեր թեստը դրական է, ցանկալի է, որ կապ հաստատեք ձեր բուժաշխատողի, կլինիկական խորհրդատվական գծի կամ հեռաբժշկության մատակարարի հետ՝ բժշկական գնահատման համար, եթե դեռ այդպես չեք արել:

Ինքնամեկուսացման ցուցումներ. Մեկուսացած ժամանակ ձեզնից պահանջվում է հետևել «COVID-19-ով վարակված մարդկանց համար նախատեսված Տնային Մեկուսացման Հրահանգներին», որոնք առկա են [անգլերեն](#), [իսպաներեն](#) և [այլ լեզուներով](#)՝ <http://ph.lacounty.gov/covidisolation>:

Ինքնամեկուսացման տևողությունը.

- a) Եթե ձեզ մոտ COVID-19-ի թեստը դրական է, և դուք ունեք ախտանիշներ, դուք պետք է ինքնամեկուսանաք, մինչև.
 - Առնվազն 10 օր անցել է ձեր առաջին ախտանիշներն ի հայտ գալուց հետո, և
 - Առնվազն 24 ժամ ջերմություն չեք ունեցել առանց ջերմիջեցնող դեղերի օգտագործման և
 - Ձեր ախտանիշները բարելավվել են
- b) Եթե դուք COVID-19-ով դրական եք թեստավորվել, բայց երբևէ ախտանիշ չեք ունեցել, ապա դուք պետք է 10 օր ինքնամեկուսանաք ձեր առաջին ախտորոշիչ (վիրուսային) դրական թեստը հանձնելուց հետո: *Մակայն, եթե ձեզ մոտ ախտանիշներ են ի հայտ գալիս մեկուսացման ժամանակ*, դուք պետք է հետևեք վերոնշյալ Բաժին a-ում ներկայացված ցուցումներին, որոնք նախատեսված են COVID-19-ի ախտանիշներ և թեստի դրական արդյունք ունեցող անձանց համար:
- c) Եթե ձեր բուժաշխատողը տեղեկացնում է ձեզ, որ կլինիկորեն կասկածում է, որ դուք ունեք COVID-19, դուք պետք է մեկուսանաք մինչև.
 - Առնվազն 10 օր անցել է ձեր առաջին ախտանիշներն ի հայտ գալուց հետո, և
 - 1** ○ Առնվազն 24 ժամ ջերմություն չեք ունեցել առանց ջերմիջեցնող դեղերի օգտագործման, և
 - Ձեր ախտանիշները բարելավվել են

ԿԱՄ

 - Բուժաշխատողը վերագնահատում է ձեր ախտորոշումը և գալիս է այն եզրակացության, որ դուք COVID-19 չունեք և
 - 2** ○ Առնվազն 24 ժամ ջերմություն չեք ունեցել առանց ջերմիջեցնող դեղերի օգտագործման:

Նշում՝ Եթե դուք ներկայումս կարանտինի մեջ եք՝ որպես COVID-19-ով վարակված անձի սերտ շփում ունեցող, դուք պետք է շարունակեք հետևել ինքնակարանտինի հրամանի ցուցումներին, նույնիսկ եթե COVID-19-ի թեստը ձեզ մոտ բացասական է, կամ բուժաշխատողը եզրակացրել է, որ դուք COVID-19 չունեք:



2. Տեղեկացրեք ձեր հետ սերտ շփում ունեցած անձանց, որ ինքնակարանտին պահպանեն, եթե ձեզ մոտ COVID-19-ի թեստը դրական է

Եթե դուք ունեք ախտորոշիչ (վիրուսային) թեստի դրական արդյունք, ապա դուք պետք է տեղեկացնեք ձեր հետ սերտ շփում ունեցած բոլոր անձանց, ինչպես սահմանվում է ստորև, որ նրանք պետք է կարանտին պահեն (մնան իրենց տանը կամ այլ բնակավայրում և մյուսներից հեռու): Մա արվում է այն պատճառով, որ նրանք COVID-19-ով հիվանդի հետ են շփվել, և եթե վարակվել են, ապա հեշտորեն կարող են այն փոխանցել մյուսներին, նույնիսկ եթե չունեն ախտանիշներ: Ինքնակարանտինում եղած ժամանակ, ձեզ հետ շփում ունեցած անձինք չպետք է լքեն իրենց կարանտինի վայրը կամ մուտք գործեն հանրային կամ մասնավոր վայրեր, բացառությամբ՝ անհրաժեշտ բժշկական խնամք ստանալու նպատակով:

Սերտ շփումների (կոնտակտների) սահմանումը. Մույն Հրամանի նպատակների համար «Սերտ շփումներ» (կոնտակտներ) համարվում են բոլոր այն մարդիկ, ովքեր շփվել են ձեզ հետ ձեր վարակիչ եղած ժամանակահատվածում*:

- Անձ, ով ձեզնից մինչև 6 ոտնաչափ հեռավորության վրա է գտնվել ընդհանուր 15 րոպե կամ ավելի տևողությամբ 24 ժամվա ընթացքում, կամ
- Անձ, ով չպաշտպանված շփում է ունեցել ձեր մարմնի հեղուկների և/կամ արտազատուկների հետ, օրինակ՝ նրա վրա հագացել կամ փոշտացել եք, նույն սպասքից եք օգտվել, ձեր թքի հետ է շփվել կամ խնամք եք տրամադրել նրան՝ առանց համապատասխան պաշտպանիչ հանդերձանքի կիրառման:
- * Դուք համարվում եք վարակիչ ձեր ախտանիշներն ի հայտ գալուց 2 օր առաջ, մինչև այն պահը, երբ ձեզնից այլևս չի պահանջվում մեկուսանալ (ինչպես նկարագրված է վերևում՝ «Ինքնամեկուսացման Տևողությունում»): Եթե դուք COVID-19-ի ախտորոշիչ (վիրուսային) թեստի դրական պատասխան ունեք, բայց ախտանիշներ չունեք, դուք համարվում եք վարակիչ առաջին դրական թեստը հանձնելուց 2 օր առաջ և այդ թեստը հանձնելուց 10 օր անց:

Ինքնակարանտինի ցուցումներ. Ձեզ հետ սերտ շփվող անձանցից պահանջվում է հետևել COVID-19-ի վերաբերյալ Լոս Անջելես Շրջանի «[Հանրային Առողջապահության Վարչության Շտապ Կարանտինի Հրամանին](#)» և «COVID-19-ով Վարակվածների հետ Սերտ Շփվողների համար նախատեսված Տնային Կարանտինի Հրահանգներին», որոնք առկա են [անգլերեն](#), [իսպաներեն](#) և [այլ լեզուներով](#)՝ <http://ph.lacounty.gov/covidquarantine>:

ՀՐԱՄԱՆԻ ՆՊԱՏԱԿԸ

Մույն Հրամանի նպատակն է օգնել դանդաղեցնելու Կորոնավիրուս 2019 Հիվանդության (COVID-19) տարածումը, պաշտպանել ավելի բարձր վտանգի տակ գտնվող անձանց և պաշտպանել առողջապահական համակարգը՝ շտապօգնության սենյակներում և հիվանդանոցներում հիվանդության դեպքերի աճից: Այս վիրուսը կարող է հեշտությամբ տարածվել միմյանց հետ սերտ շփման մեջ գտնվող մարդկանց միջև:

Բոլորը գտնվում են հիվանդանալու վտանգի տակ, բայց որոշ մարդիկ ավելի ծանր հիվանդանալու (ներառյալ՝ թոքաբորբը կամ օրգանների անբավարարությունը) կամ մահվան վտանգի տակ են՝ նրանց տարիքի, ֆիզիկական վիճակի և/կամ առողջական դրության պատճառով:

Մույն Հրամանը հիմնված է ներկայումս հայտնի և մատչելի գիտական ապացույցների և լավագույն փորձի վրա: Մեկուսացումը և կարանտինը խորհուրդ են տրվում Հիվանդությունների Վերահսկման և Կանխարգելման Կենտրոնների (CDC) և հանրային առողջապահության այլ մասնագետների կողմից՝ որպես COVID-19-ի տարածումը կանխող ապացուցված ռազմավարություն:



ԻՐԱՎԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Լոս Անջելես Շրջանի Առողջապահության Պատասխանատուի այս Հրամանը ստեղծվել է Կալիֆոռնիայի Առողջապահության և Անվտանգության Օրենքների 101040, 101085, 120175, 120215, 120220, և 120225 Բաժինների իրավասության ներքո: Առողջապահության Պատասխանատուն կարող է հավելյալ գործողություն(ներ) ձեռնարկել, որոնք կարող են ներառել քաղաքացիական կալանք կամ պահանջել տվյալ անձին մնալ առողջապահական հաստատությունում կամ այլ վայրում՝ պաշտպանելու հասարակության առողջությունը, եթե սույն Հրամանին ենթակա անձը խախտի կամ չենթարկվի այս Հրամանին:

ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

- Տնային Մեկուսացման Հրահանգներ՝ COVID-19 Ունեցող Մարդկանց Համար.
<http://ph.lacounty.gov/covidisolation> (անգլերեն և այլ լեզուներով)
<http://ph.lacounty.gov/covidaislamiento> (իսպաներեն)

Ռեսուրսներ Սերտ Շփվողների Համար

- Տնային Կարանտինի Հրահանգներ COVID-19 Ունեցողների Հետ Սերտ Շփվողների Համար.
<http://ph.lacounty.gov/covidquarantine> (անգլերեն և այլ լեզուներով)
<http://ph.lacounty.gov/covidcuarentena> (իսպաներեն)
- Հանրային Առողջապահության Շտապ Կարանտինի Հրաման.
http://ph.lacounty.gov/media/Coronavirus/docs/HOO/HOO_Coronavirus_Blanket_Quarantine.pdf
(անգլերեն)
http://ph.lacounty.gov/media/Coronavirus/docs/HOO/HOO_Coronavirus_Blanket_Quarantine-Armenian.pdf (հայերեն)

ՀՐԱՄԱՆԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՐՑԵՐ

Եթե այս Հրամանի հետ կապված հարցեր ունեք, գանգահարեք Լոս Անջելես Շրջանի Առողջապահության Վարչություն (833) 540-0473 հեռախոսահամարով:

ՀՐԱՄԱՅՎՈՒՄ Է.

Muntu Davis, M.D., M.P.H.
Առողջապահության Պատասխանատու,
Լոս Անջելես Շրջան

12/17/2020

Ամսաթիվ